

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՌԱՋ**

Աշխարհասփիռ հայութեան զաւակներուս համար, հոգեկան մեծ ցնծութիւն է եւ պատմական յիշատակելի հանգրուանի մը մասնակցութեան բերկրանք, երբ մեր ազգընտիր Հայրապետը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հովուապետական այցելութեամբ մը կը պատուէ թեմական շրջան մը:

Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեր Թեմը պատմական նման հազուադէպ հանգրուանի մը կը պատրաստուի այս օրերուն: Ընդառաջելով Թեմիս Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան եւ մեր հրաւերին, Վեհափառ Հայրապետը, յառաջիկայ 6էն 23 Հոկտեմբերին, Հովուապետական շնորհաբեր այցելութեամբ մը պիտի պատուէ մեր Թեմը եւ իր օրհնութիւնները պիտի բաշխէ մեր ժողովուրդի զաւակներուն: Ազգային Առաջնորդարանը՝ հոգեւորականաց դասով, ժողովականութեամբ, նուիրեալ ծառայողներով, նուիրաբերող բարեբարներով ու բարեկամներով, իր կողմէն ունենալով հաւատացեալներու նուիրեալ հօտը, իր հոգեւոր պետին հանդիպելու, անոր օրհնութիւններն ու պատգամները ուղղակի ստանալու իրողութեան առթած խանդով է որ կը պատրաստուի ընդառաջելու այս այցելութեան:

Նորին Ա. Օծութիւնը մեզի հետ պիտի ըլլայ աւելի քան երկու շաբաթ եւ բազմաթիւ առիթներ պիտի ընծայէ հանդիպումներ ունենալու մեր Թեմի զաւակներուն հետ, հովանաւորելու հոգեւոր, ազգային, դպրոցական ու պաշտօնական հանդիսութիւններ, մէկ խօսքով՝ գործնապէս մասնակից ըլլալու թեմական մեր համայնական կեանքին:

Անցեալին՝ նման փորձառութիւններ փաստագրած են, որ Հովուապետական այցելութիւնները մեր եկեղեցական, ազգային ու կրթական կեանքը վերակենսաւորող ազդակ հանդիսացած են: Այդպէս ալ պիտի ըլլայ յառաջիկայ Հոկտեմբերին: Այցելութեան նախապատրաստական աշխատանքներուն համար, Ազգային Առաջնորդարանը, Թեմիս ժողովականութիւնն ու այս առիթով կեանքի կոչուած յանձնախումբեր՝ Հովուապետական Այցելութեան Գործադիր Մարմին, Ճաշկերոյթի, Յարաբերական ու Մամուլի, Ազգ. Վարժարաններու Հանգանակային, ինչպէս նաեւ ծիսական շրջաններու հիւրընկալ յանձնախումբերը արդէն տեւողագին աշխատանքի լծուած են ու կ'ապրին շնորհաբեր այցելութեան ստեղծած մթնոլորտին մէջ: Վաղը, այս զգացումները պիտի տարածուին մեր ժողովուրդի զաւակներուն վրայ ու բոլորը պիտի վարակեն նոյն սպասումով, ընդառաջումին մասնակից ըլլալու տրամադրութեամբ:

Նորին Ա. Օծութեան մեր մէջ ներկայութիւնը բարեբեր գործօն մը պիտի ըլլայ առաւել զարկ տալու մեր հոգեւոր կեանքի վերանորոգման: Առօրեային բերած տագնապալի ու բարդ կացութիւններուն դիմաց, որոնք յանախ կը թողուն սաստիկ փոթորիկներու ներգործութիւնը, մեր եկեղեցին ու քրիստոնէական հաւատքը միշտ ալ հանդիսացած են հոգեկան անդորրութեան, միօրեայութեան ու գօտեպնդումի խարիսխ. այս առաքելութիւնը յաւելեալ թափ ու հզօրանք պիտի զգենու Վեհափառ Հայրապետին ներկայութեան շնորհիւ:

Ազգային մեր կեանքին մէջ, հայապահպանման ու մեր ժողովուրդի գոյատեւման գործի դաշտերուն մէջ, Հայ Դպրոցին վերապահուած դերը երկար բացատրութիւններու չի կարօտիր: Այդ նշմարտութիւնները լուսարձակի տակ բերելու համար, Նորին Ա. Օծութիւնը մօտիկ անցեալին Հայ Դպրոցին նուիրուած

տարի էր հռչակած, յստակ թելադրանք ուղղելով, որ նման ձօներ չեն սահմանափակուիք տուեալ տարիով, այլ վեր կ'առնէր անհրաժեշտութիւնը հետեւողական հոգածութիւն ցուցաբերելու Հայ Դպրոցին նկատմամբ: Եւ ահա, Հովուապետական այս այցելութիւնը նոր առիթ մը պիտի ըլլայ հայրապետական նոյն պատգամը վերապրելու եւ գործնական ֆայլերով իրագործելու, ի խնդիր Հայ Դպրոցի վերածաղկման ու ամրակայման, մանաւանդ երբ իրագեկ ենք, թէ այս երկիրն ու ամբողջ աշխարհը նիւթական տագնապներու մատնած իրականութիւններուն դիմաց, Հայ Դպրոցը ինչպիսի՛ մարտահրաւերներու դէմ յանդիման է եւ որքա՛ն աւելի կը կարօտի մեր ժողովուրդին ու բարերարներուն զօրակցութեան, ֆաջալերանքին: Այս նկատառումով ալ, 2011 տարին Հայ Մանուկին նուիրելու Վեհափառ Հայրապետին որոշումը մասնայատուկ իմաստ ու խորք կու տայ մեր կրթական հաստատութեանց ու ընդհանրապէս սեփական մշակոյթի պահպանումին հանդէպ նախանձախնդրութեան պատգամներուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ ընդհանրապէս, ու Վեհափառ Հայրապետը՝ անձնապէս, հոգեւոր արժէքներու փարոսը ըլլալու առաջնութեան կողմին, եղած են ու կը մնան մեր ազգային իրաւունքներու զինուորագրեալները, աշխատանքի ուսուցիչներ: Տարբեր ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ նոյնիման Կաթողիկոսութիւնը, Ցեղասպանութեան գոհ մեր տարագիր ժողովուրդին պէս, ի՛նք ալ տարագիր դարձաւ ու կը մնայ իրաւատիրութեան առաջին գիծին վրայ, կ'առաջնորդէ մեր երթը, ի խնդիր ազգային պահանջատիրութեան հզօրացման:

Օ՛ն, ուրեմն. այժմէն իսկ հոգեպէս ու գործակցութեան բարի տրամադրութիւններով, գոհաբերումի ու նուիրումի կամով պատրաստուինք՝ դիմաւորելու շնորհագարդ Հայրապետը. թող մեր երէց սերունդի անդամները՝ կրթական մշակներ, մտաւորականներ, ազգային գործիչներ, ծնողներ ու հարազատներ, Հայրապետական այցելութեան մասին լուսաւորեն ու նախապատրաստեն մեր նորահաս սերունդներուն միտքերն ու հոգիները, նկատի ունենալով, որ անոնցմէ շատեր հաւանաբար առաջին անգամ ըլլալով առիթ պիտի ունենան Վեհափառի տեսութեան ու անջնջելի յիշատակներ պիտի արձանագրեն իրենց կեանքներուն մէջ. եւ, ինչպէս նշեցինք արդէն՝ Վեհափառ Հայրապետի այցելութեան կիզակէտը կը հանդիսանայ մեր նոր սերունդը՝ Հայ Մանուկն ու Հայ Դպրոցի յարկը վայելողը, անոնց ջամբելու հոգեկան հարստութիւն, ազգային ոգի ու պահանջատիրութեան լծակցութիւն:

Արդ, աղօթենք նաեւ, որ բարձրեալն Աստուած երկար կեանք շնորհէ մեր Հայրապետին, որպէսզի մեր եկեղեցին, մեր ժողովուրդն ու ազգը ընդերկար վայելեն Նորին Ս. Օծութեան առաջնորդութիւնն ու հովանին:

Բարով կը սպասենք Ձեզ, Վեհափառ Տէր:

ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Առաջնորդ

ON THE PONTIFICAL VISIT OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I

For Diasporan Armenian across the globe, it is a great honor and joy when our Pontiff, His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, visits our Prelacies and communities.

We at the Western Prelacy are currently preparing for the Pontifical Visit of His Holiness to the Western United States in October of this year. Clergy, Councils, Parishes' Delegates and Board members, church servants, sponsors, friends, and the community at large enthusiastically await the Pontifical Visit of His Holiness, eager to welcome him once again to our Prelacy and to receive his paternal blessings.

The Pontifical Visit will extend over a period of two weeks, during which our community members will have ample opportunities to hear the thoughts and messages of His Holiness on a vast number of issues during various events.

In the past, the Pontifical Visit of His Holiness has bolstered us and breathed new life into our spiritual, national, and educational mission, and this upcoming Pontifical Visit will be no different.

The Religious and Executive Councils, and the committees appointed to oversee the planning of the Pontifical Visit, have already delved into their responsibilities. Preparations are well under way and all have joined their efforts and are working diligently to ensure a historic visit.

With the Pontifical Visit of His Holiness, we are certain that we will all experience a spiritual renewal. In this often chaotic and hectic world, our church and our faith provides the spiritual nourishment and strength for us to endure. This one of our many missions will receive momentum with the Pontifical Visit of His Holiness.

The role of our Armenian Schools in the preservation and promotion of our language, faith, and heritage cannot be overstated. His Holiness has long stressed the unique and valuable role of our Schools, even proclaiming the year 2006 as the "Year of the Armenian School". At the time, His Holiness advised that we must pay special attention to the future of our schools not just throughout that year but always. The further anchoring and continued progress of Armenian Schools is an ongoing process that requires constant care and attention, and that will be highlighted during the upcoming Pontifical Visit. Especially given the economic crisis of the times, our Schools face challenges which require the collective support and encouragement of our sponsors and community members. Furthermore, the proclamation of His Holiness of 2011 as the "Year of the Armenian Child" gives new meaning and significance to the mission of our educational institutions with regards to the fostering of our cultural heritage.

Alongside being beacons of our religious values, the Great House of Cilicia in general and His Holiness Catholicos Aram I personally have been and continue to be advocates for our national rights. Sharing a history of exile with our people, the Catholicosate of the Holy See of Cilicia remains on the front lines as we reassert our spirit of national aspirations, which will be one of the focuses of the upcoming Pontifical Visit.

Let us join our efforts and work together as we prepare to welcome our beloved Pontiff in just a few short months. Let our elders, community leaders, educators, and parents enlighten our young generation about the Pontifical Visit, and prepare their minds and spirits as many of them will likely have the opportunity to be among His Holiness for the first time, a meeting that will remain as sweet memories for years to come.

And finally, let us pray for Almighty God to grant long life to His Holiness so that he may continue to lead and guide us and the Armenian Apostolic Church for years to come.

Archbishop Moushegh Mardirossian
Prelate